Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆ» ՓԲԸ ՄԻՋԵՎ 27.02.2020թ. ԿՆՔՎԱԾ «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» N ՀՀ ԱՆ ՄԱԾՁԲ-2020/12-3 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար Լուսինե Քոչարյանի մի կողմից, և «Լոռու մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Հայկանուշ Մարգարյանի, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 27.02.2020թ. կնքված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» N ՀՀ ԱՆ ՄԱԾՁԲ-2020/12-3 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.2 կետը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի Հավելվածներ 2-ում և 4-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հավելված 2-ի աղյուսակի «2020 թվականի պայմանագրային գումար» սյունակի, Հավելված 4-ի «ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԳՈՒՄԱՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» և «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» աղյուսակների «Ընդամենը՝ տարի» սյունակների «16,659.5» թվի փոխարեն սահմանել «24,144.5» թիվը, իսկ Հավելված 4-ի աղյուսակների «դեկտեմբեր» սյունակների «1,850.8» թիվը փոխարինել «9,335.8» թվով:

2. Սույն Համաձայնագիրն՝

1) ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2) գործողության ժամկետով տարածվում է 2020 թվականի հոկտեմբերի 1-ից սկսած ժամանակահատվածի վրա և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

4. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

Պատվիրատու՝ առողջապահության նախարարություն	Կատարող՝ «Լոռու մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ
Հասցե՝ Երևան, Կառավարական տուն 3	Հասցե՝ ք.Վանաձոր, Բանակի 8գ
Սպասարկող բանկ՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Սպասարկող բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ
Բանկային հաշիվ՝ 900011105088	Բանկային հաշիվ՝ 247170507955
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 06936765
Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար՝ Լուսինե Քոչարյան	«Լոռու մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ-ի տնօրեն՝ Հայկանուշ Մարգարյան
KOCHARYAN LUSINE 6509770407 Подписано: KOCHARYAN LUSINE 6509770407 DN: cn=KOCHARYAN LUSINE 6509770407, c=AM Дата: 2020.12.05 11:56:14 +04'00' (ստորագրություն)	Digitally signed by MARGARYAN HAYKANUSH 6807740123 (ստորագրություն)
Հեռ. 060-808 003 E-mail: info@moh.am	Հեռ. 0322-43053 E-mail: lmapk@inbox.ru